



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

2 ապրիլի 2019թ. թիվ 419

**Ա. ՌԵՎԱԶՅԱՆԻՆ ԵՎ Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ  
ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետի զեկուցագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Ն

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Արամ Ռևազյանին և նույն բաժնի առաջատար մասնագետ Ռուբեն Մխիթարյանին ա/թ ապրիլի 3-ին մեկ օրով գործուղել ք.Ալավերդի՝ «Սպորտլանդիա» մարզական միջոցառման Թումանյանի տարածաշրջանային փուլի պարզևատրումը կազմակերպելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

 Invalid signature

X 

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թ. ապրիլի 2  
ք.Վանաձոր